

ՊԱՇԱՐՈՒՄ

● ՍԿԻՋՐԸ՝ 1-ԻՆ ԷԶՈՒՄ

էս մի գաղափարն էլ Արցախում ծեփեց՝ իրար գլխի դառած փախստական հայերի համար կառուցվող շենքը կիսատ մնաց. ճանապարհը շինողը թող դադար տա, մյուս կարևորները մի կողմ գրվեն, որ եղած սակավ ցեմենտ ու շինարարով սեփական բանտ կառուցվի: Ժողովրդի պահանջով ու ստիպմամբ բանտ կառուցվի: Որպեսզի մեր երեխաները, մեր տան տերը, մեր որդին ազատվի Շուշվա բանտի՝ հայի համար երկրային դժոխքից, որտեղ մտնողը այլևս չի վերադառնում կամ դառնում է այնպես, որ թե վերադառնա՞ծ, թե չվերադառնա՞ծ՝ որևէ մի տեղը բեղմնիտ խախտվել է՝ յլարդը տրորված է, հուշը թուլացել է, մեր սիրելի հարազատը էլ է՛ն չի՛...

Մենք մեր բանտն ունենաք,— շրջափակման ճիրաններից մի թիչ ցեմենտ պոկվի, եման մի շինություն համար երկաթե դուռ, ուրիշ կոնստրուկցիայի պատուհան, այլ լուծումներով էս շենքի՝ դժվար ձեռք բերվող մյուս մասերը բերվեն՝ փեղեկաթիտով է, ուղղաթիտով է, լավ վերանորոգած բնակարանը լքած բազմեցի փախստականը թող սպասի, իր ձեռքով տակուզուխ հիմնավոր սարքած, իր տուներ թողած բազումսարովցին, մազապուրծ ձկած սոււզայիթցին, մինգեչուրցին, շուշեցին, մյուսները սպասեն, հիմա կարևորը մեր ձեռքով մեր բանտը կառուցվել է, էս մի աճապարհիլը ո՛նց հասկանանք: Պատմության դատաստանից ինչու՞ չեն վախենում: Մոտ գալիքի հարցումին մեղավորները՝ ամենամեծիցը սկսած, ինչ պատասխան են տալու:

Օ՛, ժամանակներ, օ՛, բարձրեր:

ԲԵՐԴԱՅՈՐԸ խակ զկեռ է՝ խրված Ադրբեյջանի ժողովրդական ճակատի բողաղը՝ կուլ տալ չի լինում, սրձկալ հրեարավոր չէ: Ղաչաղ նարուց առաջ և հետո՝ զաչաղ նարու սխտեմավորված լայն կիրառման զբաղմունքը որոշվեց մոդիֆիկացնել՝ հեարավոր դարձնելու համար Բերդաձորը կլիկը քարապարանուկի, մեքենաների շարքի, ճանապարհների բանդ ու բարան փակելու՝ նախկինում գիշերով, հիմա ափաշկարա մոգուլով: Գործի անցան ետանդուն, համահավաք ուժերով՝ քուրդ ադրբեյջանցիները կալիսի կոնից, Շուշվա թեմը՝ մյուսից:

Բերդաձորցիք նախկին քիթվա հարևաններին ասացին՝ զուք այնպես կարողացեք, որ մենք չկարողանանք: Բարձրացան պեշին պտուկը, հարցնելու ձևով ասացին. գիշերվա մթնում, որ հրացան եք տրաքիցնում, ձեր արածը լուսեկայի վրա փարսուղով քար նետել չի՞, քիթվա եք՝ մե անգամ էլ մեր ուզածը զուք ուղեցեք:

էսպես խոսելը անհամեստ զնահատվեց, նկատվեց ամբարտապան, ձեռ անելու եման: Շուշի-կալին այլանսը որոշեց Բերդաձորի հարցը տակահանելու լուծելու:

Բկներին մնացած զկեռը հարվել պիտի՛, Շուշվա խեղդանոք Բաքվից Շուշի ժամանեց փորձագետների մի շարանուկ, որպեսզի Շուշին իր հայ բնակիչներով հրի մատնող, Ղալբալի, Հարար, ուրիշ այլ շենքեր վերնող նախնիների փորձը ուսումնասիրվի, բարբելեցին դոխտուր Մեհմանգարովի արխիվները, Ասադ Կարաեկի տեսական ժառանգությունը պարան-պարան արվեց, Սուլթանովի կենսագրությունը ուսումնասիրեցին, դիմեցին առճամանակից պետություն ազգակից մասնագետների կոնսուլտացիային, որպեսզի օրհնյալ պապերի տակտիկան հազեցնեն ժամանակակից տեխնոլոգիայով:

Որ կրկնվի նախնիների էֆեկտը:

Կողք հաստ, կոռ և ամբարիշտ՝ մեզնից պտկած էս ազգանթուրքութաթարադրբեյջանցի օդուղները, որ իրենց հայ արցախեցի են կոչում, պետք է կամ դարձի բերվեն. կամ ոտղերը քաշեն իրենց Հայաստանները: Խանլարի, Շամխորի, Քարհատի պրեցեդենտը կա, նոր սովորած բառը տեղին հարմար է գալիս, էդ բառով նուխիի, Գանձակի, Վարդաշենի ամենամտտիկ, ամենակարևորը շավեց՝ Շուշիի պրեցեդենտը ստեղծվեց:

Արխիվների թող փոշնծծիլով հանվեց, Սուլթանիթում արտադրվող «Այնա» լվացչափոշիով հարվեց ու խուժանի ձեռքը արվեց պսպղեցրած՝ նախկինում հաճատարիմ ծառայած, հիմա հաներավի մոռացված «շրջափակում» երկտրաքլանի հրացանից էլ ուժեղ զենքը.— հակառակորդը դժվարանում է շնչել, ոտքերը դառնում են բխոված, մտքի թելը ծյուրվում է, կամբը թուլանում,— ձեռքը տար ու անարգել վերցրու սրտիդ ուզածը, ու քո անասունը բշիբ քո գոմը, աղչիկների սողաֆ ճակատից պոկիր ոսկի ճակատեցը...

Ադրբեյջանի ազգային ճակատի ամազը ազգի հանդեպ համարվեց շրջափակման ռեալիստիկան, Շրջափակումը ոտտացիայով տիրաժամվորվեց ու բաժանվեց բուրբին, Դեֆիցիտ չկար, բուրբը զինվեցին հային ձեկի բերելու նորացված հին զենքով, որպեսզի Իսմայիլիի շրջանում մնացած մի քանի հայ գյուղեր, Քարհատում, Շամխորում, մյուս տեղեր մնացածները կիրառման ենթարկվեն:

Ադրբեյջանի հեռատե՛ս նախորդներ. Ղալբալի ամեն բանդ ու բարու քաշել են հարևանի՝ իրենց դուռ ու դարպասի մոտով, ոնց որ կոմունալ սոցբնակարաններ՝ խոհանոցը, ոտաց ճանապարհը, առավուները երեսիդ մի կից չուր չփելը, մյուս բաները ընդհանուր են, բայց էնպես ընդհանուր են, որ եթե ուղեկամ կամ եթե շուգենամ՝ լինի կամ չլինի ընդհանուր: Հաղթութից ազում ես գնալ Հաղթութի Քարազուխ, Սպիտակաշեն, մյուս շենքերը, պիտի անցնել Զարբայիլ, Ֆիզուլի՝ սրուրի ամար... և ինձ պատկանող՝ ճանապարհներով: Ֆիզուլու, Զարբայիլի, մյուսների թվանքավորված խուժանը հայտարարել է շրջափակում ու սմեր ընդհանուր՝ ճանապարհը հայտարարել է իրեն պատկանող:

Այսպես, Ադրբեյջանի հեռատես նախորդները Միրզաֆար Բաղիրովից մինչև վերջին Քյամբան Բաղիրովը՝ սրանց արանքն ընկածներով միասին, մարդի ձեռուտը կապել են տեսնապես, մյուս բուրբ փանդուհեարներով ու շրջափակման օճառած օղակը զցել մարդի վզին, ուզում են խեղդել:

Բերդաձորը թիկունքից խրվող խանչալ է, պետք է կլիել: Նշանակվեց շրջափակման ուժեղացված ռեժիմ կոռ զարարադցու բերդաձորցու տեսակի համար,— պիլի-ժագի ճողապոր՝ մանր պիկը, դժվար շարքվող, շարդես էլ՝ լուղալի միջուկը չի հանվում: Ուզած-չուզած ռեժիմը քիչ-քիչ ուժեղացվեց, և այսքը կանգնեց «պաշարում» ռեժիմի վրա: Այսպես, հայկական այս փոքրիկ աժուն աշխարհի խղճի առաջ հայտնվեց պաշարման գրկում,— խորհրդային երկրի աշխի փառ է իչել, մեր անքոցը խլանում է աժխահատների բաղաձայն վանկարկումներում, երկրի ղեկավարների ոչ երաժշտական լսողությունը հարմարված չէ ձայնային երանգներին, ով բարձր է խոսում՝ ես էլ լսվում է:

Խոսնաշփոթ էս ժամանակներում ամեն ինչ հնարավոր է դառնում:

Բերդաձորցու աճեցրած՝ շուշեցուն պատկանող անասունը որոշվեց տանել Ստեփանակերտ: Իսկ բերդաձորցին հարցրե՞լ է Շուշվա մեյզանի կարծիքը, ինչ անենք, որ անասունը մեքենաները լցրած և զինվորական կարգախմբերով պաշտպանված է, առաջին անգամ է մեքենա շարքվում ու անասունը բշվում Շուշի, անհնազանդ ղեղապես-սերժանտ կազմին «կազմավորելու» պրակտիկային ետ՞ր պիտի ծանոթանան միանգամից երեք զեներալ պատանդ առնելու՝ նորից բառն ասենք, պրեցեդենտը մոռացվե՞լ է. կարգախումբը մի կերպ իրեն պաշտպանելով վերադարձել է Ստեփանակերտ՝ զեներալ Սաֆոնովին զեկուցելու...:

Հայագերծ Շուշվա թթին տակ Կանադ Քալայի, Զամիլվի, Խոչալվի, մյուսների... իզացիայի պրոցեսը ավարտված է: Բաղարայի ծածկներում օրա թողած ապօրինածին Մեղալին վերջուպես ստացել է գյուղի ստատուսը, «Բերված» ադրբեյջանցիներով զորացվել է Մալիբեկլուն, Ղուշուլարը, Խոչալուն, 20 թվին ավերված հայկական Ղալբալիշենը 89-ին լիցքավորվել է Ֆերգանայի ժլոցից Ղարաբաղի կաթկըթոցը բերված մեխիթթի թուրքերով, Բաքվի արդյունարերական ձեռնարկությունների մասնաճյուղերի մետաստազները տարածվում են Մարտունու Խոչալվենգում, Մարտակերտի Արխավենգում, մյուսներում, Հաղթութի՝ ազգային նոր պրոֆիլավորում ստացած գյուղերում, Ստեփանակերտի շուրջ զասավորված Շուշի-Ղալբալի-Կրկման, Խոչալու-Մալիբեկլու հյուսքերում: Այս ամենով հանդերձ Շուշվա թթի տակին Բերդաձորը առու է կապում իր այգիներին, մեր Եվլախի, Բարդա-Աղաղմի միջով բերված գաղից ուզում են մի ճուտ խողովակ տանել, իբր դարուլ ենք մեր էլեկտրականությունը տալուն, մեր նովթը տալուն,— մեր էս սարքի էս արտաներում մեր անասունը պիտի պահվի, մեր հովիտների այգիների համով միողը մենք պետք է վաճառենք, որպեսզի էդ համեղ միողը մեր շահել հարսնացունների համար դառնա ոսկե ատմանայար: Ահա էսպես, մեր պլանների էս ֆոնին, Շուշվա թթի տակ, Ադրբեյջանական ժողովրդական ճակատի վճռակալություն պայմաններում բերդաձորցի մի քանի հայեր խրվել են սարերի կողք, պոկ չեն գալիս...